

ՀՈԼՈՎՆԵՐԻ ԹԵՌՐԵՍԱ

Ա. Լ. ՍԱՐԳՅԱՆ

Գրեթե մեկ դար է, ինչ Քայ լեզվաբանների կողմից ուսումնասիրվում է աշխարհաբարի հոլովների քանակի հարցը՝ տեղիք տալով բանավեճերի ու իրարամերժ կարծիքների: Այդ կարծիքները երեքն են. ժամանակակից հայերենում կա 5 հոլով, կա 6 հոլով, կա 7 հոլով: Հոլովների քանակի մասին գրվել ու խոսվել է բազմիցս, այդ հարցը քննել ու մեկնաբանել են բազմաթիվ հեղինակավոր գիտնականներ, և մենք չէինք անդրադառնա այս խնդրին, եթե չլիներ մի քանի հանգամանքներ, որոնք մեզ թույլ են տալիս հարցը յուրովի մեկնաբանել: Որո՞նք են դրանք:

1. Հոլովների քանակի մասին խոսելիս գիտնականները հաճախ հուզական (էմոցիոնալ) վերաբերմունք են հանդես բերում, ինչը խանգարում է հարցի գիտական հստակ լուսաբանմանը:

2. Կանխավ նշվում է հոլովների քանակը, հետո միայն այն հիմնավորելու և հաստատելու փորձ է արվում:

3. Չեն տարբերակվում գոյականական և դերանվանական համակարգերի հոլովումները, և հոլովների միևնույն քանակը վերագրվում է երկուսին էլ: Մինչդեռ քերականական միևնույն կարգը տարբեր խոսքի մասերի համար տարբեր դրսևորումներ կարող է ունենալ, և դրանք, որքան էլ փոխկապակցված լինեն, պետք է ուսումնասիրել առանձին. (*հմտ.* օրինակ՝ գոյականի, դերանվան և բայի թվի կարգերը, դերանվանական և բայական դեմքի կարգերը, գոյականի և դերանվան գործածությունը կապերի հետ և այլն): Նույնիսկ դերանվան տարբեր տեսակների հոլովումները կարող են իրարից տարբերվել (*հմտ.* օրինակ՝ *ես* և *ով* դերանունների հոլովումները):

4. Որքան էլ տարօրինակ թվա, հոլովների քանակին վերաբերող որոշ աշխատություններում չի սահմանվում հոլովի կարգը, այլ միայն խոսվում է հոլովների քանակի մասին: Այսինքն՝ առանց պարզելու ուսումնասիրվող կարգը ուսումնասիրում են նրա հատկանիշները:

5. Հոլովների քանակը պարզելու համար հաճախ վկայակոչվում են ոչ թե եղած փաստերը, այլ այս կամ այն հեղինակավոր գիտնականի, մասնավորապես Աբեղյանի և Պալասանյանի կարծիքները, և դա ուսումնասիրությունը ավելի շատ դարձնում է այդ կարծիքների քննություն:

Մենք կփորձենք հնարավորին չափ գերծ մնալ վերը նշվածից և հարցը լուծել միայն փաստերի վկայակոչումով, դրանց համադրությամբ կատարվող եզրակացություններով և ապացուցման եղանակով: Դրա համար նախ առանձնացնենք մի շարք դրույթներ, որոնք հիմք կդառնան ապացուցման համար:

Դրույթներ

Գոյականի հոլովների քանակը պարզելու համար առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե ինչ է հոլովը: Հայոց լեզուն ուսումնասիրելիս հայտնի է դառնում, որ խոսքում գոյականը դրսևորվում է երկու ձևով՝ ուղիղ և մասնիկավորմամբ կամ հերթագայությամբ թեքությավորված: Ուղիղ ձևը պայմանականորեն

¹ Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 256-265:

կարելի է ելակետային համարել: Պայմանականորեն ենք ասում, որովհետև տեսականորեն ինչպես հնարավոր է թեքությունավորված ձևերը ծագած համարել ուղիղ ձևից, այնպես էլ ուղիղ ձևը հնարավոր է համարել թեքված ձևերից թեքությանի չեզոքացմամբ առաջացած (օրինակ՝ *ծառի* ձևը համարվում է *ծառ* բառաձևի և *-ի* մասնիկի զուգորդմամբ առաջացած ձև, բայց կարելի է նաև *ծառ* բառաձևը ստանալ *ծառի* ձևից *-ի* մասնիկի անջատումով): Այսինքն՝ ձևաբանական մակարդակում թեքվող խոսքի մասերի համար ունենք ոչ թե բառեր, այլ բառաձևեր, քանի որ ուղիղ ձևերն էլ քերականական իմաստ ունեցող և թեքված ձևերին հակադրվող բառաձևեր են:

Ինչևէ, խոսքում կա գոյականի երկու դրսևորում՝ ելակետային և թեքությավորված, ընդ որում մեկ գոյականը միևնույն ժամանակ կարող է թեքությավորված լինել մեկից ավելի մասնիկներով (օրինակ՝ *քար - քար+եր+ից+ս*) կամ հերթագայությամբ (օրինակ՝ *հայր -հ+ո+ր+ից+դ*): Ամեն մի թեքությանի միջոցով արտահայտվող քերականական կարգը պարզելու համար բնականաբար պետք է առանձին-առանձին ուսումնասիրել գոյականի և միայն մեկ թեքությանի զուգորդումով ձևավորվող կարգը, ապա նոր միայն մի քանի թեքությունների զուգորդումները: Երբ ուսումնասիրում ենք գոյականի զրոյական և թեքությավորված ձևերով կազմվող համակարգերը, ապա առանձնանում է թեքությունների 3 խումբ, որոնք, թեքությավորված ձևերը հակադրելով զրոյական ձևերին, նրանց հետ ձևավորում են երեք համակարգ.

- ա) որոշյալ-անորոշություն կամ ցուցաստացականություն արտահայտող,
- բ) եզակիություն և հոգանակիություն արտահայտող,
- գ) վերաբերական-առնչակցական տարբեր հարաբերություններ արտահայտող:

Ըստ դրանց էլ առանձնացվում են գոյականի քերականական 3 կարգեր՝ առկայացման, թվի և հոլովի: *Գոյականի հոլովի կարգը գոյականի զրոյական և թեքությավորված ձևերի հակադրությամբ կազմվող այն համակարգն է, որի միջոցով խոսքում դրսևորվում են գոյականի տարբեր վերաբերական-առնչակցական հարաբերություններն այլ առարկաներ, հատկանիշներ ու գործողություններ, ինչպես նաև քերականական հարաբերություններ արտահայտող բառերի նկատմամբ* (օրինակ՝ *գրքի էջը, գիշերվա խավարը, արևի ծագելը, գրքի մասին* և այլն): Հոլովական համակարգի ամեն մի ձևը հոլով է և ունի քերականական իր իմաստը: Պետք է նշել, որ քերականական միևնույն իմաստը զանազան պատճառներով² տարբեր գոյականների համար արտահայտվում է տարբեր թեքություններով (օրինակ՝ բացառական հոլովի *-ից* և *-ուց* վերջավորությունները և այլն): Բայց այդ թեքությունները քերականական նոր իմաստների, հետևաբար նաև նոր կարգերի արտահայտիչներ չեն (օրինակ՝ *ծառի, ընկերոջ, օրվա, դռան, մարդու, տան* և այլն, *գործով, շարժմամբ* և այլն):

Այսպիսով՝ կա համակարգ, որի ամեն մի ձևն ունի քերականական իր իմաստը: Այդ իմաստները հաճախ նույնացվել են շարահյուսական կիրառություններին, և դրանց հիման վրա էլ սահմանվել են հոլովները: Սակայն այդպիսի նույնացումը ճիշտ չէ: Ինչպես նշում է ակադեմիկոս Էդ. Աղայանը. «Շարահյուսական պաշտոնը և բառերի միջև շարահյուսական հարաբերություններ ստեղծելը հոլովի՝ որպես քերականական կարգի, գործառնությունն է, ֆունկցիան, դերը և ո՛չ թե ինքը՝ քերականական կարգը: Այն, որ հրացանը գործադրվում է սպանելու համար, չի նշանակում, թե հրացանը սպանություն է՝: Հոլովի քերականական իմաստն ընդհանուր է, իսկ նրա կոնկրետ դրսևորումները, այսինքն շարահյուսական

² Տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 159:

³ Տե՛ս Էդ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 181:

կիրառությունները, որոնք արտահայտված են տվյալ քերականական ձևի միջոցով, պայմանավորված են 3 գործոնով՝ հոլովով բառի կոնկրետ բառական իմաստով, հոլովված բառի կիրառման խոսքային միջավայրով, հոլովված բառին տվյալ դեպքում առնչվող այլ բառերի քերականական կարգերով: Օրինակ՝ *-ից* մասնիկով կազմվող բառածևն ունի ելակետ, սկզբնավորում ցույց տվող իմաստ: Բայց թե ինչի սկզբնավորում է արտահայտվում տվյալ դեպքում, պարզ է դառնում վերոհիշյալ 3 գործոնների կոնկրետ դրսևորումներից. *հմմտ. ելնել քաղաքից, կարմրել հուզմունքից, շփոթվել հուզմունքից* և այլն: *Ելնել քաղաքից* կապակցության մեջ *քաղաք* բառը տեղի պարագա է, որովհետև այդ բառը տեղ է ցույց տալիս, գործածվել է *եյնել* բայի հետ, որը չեզոք սեռի է: *Կարմրել հուզմունքից* կապակցության մեջ *հուզմունք* բառը պատճառի պարագա է, որովհետև գործածվել է *կարմրել* չեզոք բայի հետ և ցույց է տալիս նրա կատարման պատճառը: *Շփոթվել հուզմունքից* կապակցության մեջ *հուզմունքից* բառը ներգործող խնդիր է, որովհետև կապվել է *շփոթվել* կրավորական սեռի բայի հետ և ցույց է տալիս, թե ինչի ազդեցությամբ է կատարվել գործողությունը: Այսինքն՝ շարահյուսական պաշտոնները ձևավորվել են միևնույն թեքությով, բայց տարբեր են: Բերենք հետևյալ նախադասությունը. *«Աշակերտ Արամը գիշերը հասալ քաղաք»*: Այս նախադասության մեջ բոլոր բառերը, բացի *հասալ* բայից, դրված են ուղիղ ձևով՝ զրո մասնիկավորմամբ (Արամը և գիշերը բառերն ունեն հոդ, որը քերականական այլ կարգի ցուցիչ է), սակայն նրանցից առաջինը որոշիչ է, երկրորդը՝ ենթակա, երրորդը՝ ժամանակի պարագա, չորրորդը՝ տեղի պարագա, որովհետև այդ պաշտոնները պայմանավորված են ոչ թե բառերի ձևով, այլ կոնկրետ իմաստներով և միմյանց նկատմամբ ունեցած փոխհարաբերությամբ: Հետևաբար սխալ է հոլովը շարահյուսական կիրառությամբ սահմանելը: Հաճախ նշվում է, որ օրինակ գործիական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որի միջոցով կատարվում է գործողությունը: Սակայն այդպիսի սահմանումը բնորոշում է գործիական հոլովով արտահայտված գոյականների ընդամենը մի կիրառությունը: Հասնետե ենք հետևյալ կապակցությունները՝ *վերադառնալ գիշերով, անցնել ճանապարհով, գրել գրիչով, համաձայնել ուրախությամբ, բացկայել մեկ շաբաթով, տեսքով դուրեկան, խնձորով կարկանդակ*: Սրանցից յուրաքանչյուրում կա գործիական հոլովով դրված մեկ գոյական, սակայն, վերոհիշյալ 3 գործոններով պայմանավորված, միայն *գրել գրիչով* կապակցության մեջ է գործիական հոլովով դրված գոյականը ցույց տալիս գործողության կատարման միջոցը: Ուստի սխալ է գործիական հոլովի վերը բերված սահմանումը:

Ահա այս դրույթները հստակեցնելուց հետո անցնենք գոյականի հոլովման համակարգի անդամների՝ հոլովների քանակի ուսումնասիրմանը:

Հոլովների թեքումը

Գոյականի հոլովման համակարգում ունենք որոշակի քանակով ձևեր՝ իրենց ձևաբանական իմաստներով, որոնց միջոցով շարահյուսական մակարդակում արտահայտվում են ավելի մեծ քանակով շարահյուսական պաշտոններ: Անհրաժեշտ է պարզել հոլովների քանակը: Կա երեք ամբողջություն՝ ձևերի, ձևաբանական իմաստների և շարահյուսական կիրառությունների: Այնն մի ձև ունի ձևաբանական մեկ իմաստ, հետևաբար ձևերն ու ձևաբանական իմաստները քանակով համընկնում են, այսինքն՝ հոլովը ձևի և ձևաբանական իմաստի միացություն է: Եթե ընդունենք, որ հոլովների ձևաբանական իմաստները հենց այն իմաստներն են, որոնք դրսևորվում են շարահյուսական մակարդակում կոնկրետ բառերի միջոցով, ապա պետք է պնդենք, որ հոլովը ոչ թե ձևի և իմաստի, այլ ձևի և իմաստների ամբողջություն է, որովհետև հոլովական մեկ ձևով արտահայտվում են մեկից ավելի շարահյուսական իմաստներ: Հետևաբար կունենանք

որոշակի սահմանափակ թվով ձևեր, որոնց միջոցով արտահայտվում են անհամեմատ ավելի մեծ թվով շարահյուսական պաշտոններ: Քանի որ ձևերն ավելի փոքրաթիվ են, քան շարահյուսական իմաստները, հետևաբար ունենք մեկից ավելի շարահյուսական պաշտոններ, որոնք արտահայտվում են միևնույն ձևով՝ հոլովով: Ուրեմն առաջնայինը կլինի ձևը, իսկ երկրորդայինը՝ նրանով արտահայտված շարահյուսական պաշտոնը, այլապես պետք է հոլովները սահմանենք հետևյալ մոտեցմամբ: Օրինակ՝ ոչ թե կսահմանվի, որ բացառական հոլովով կարող են դրվել տեղի պարագան, ժամանակի պարագան, սահմանափակման խընդիրը, ներգործող խնդիրը, ստորոգելին (և այլ անդամներ), այլ պետք է սահմանել, թե այն հոլովը, որով դրվում են վերոհիշյալ (և այլ) անդամները, բացառականն է: Այդպիսի սահմանումը, բացի նրանից, որ գործնականում կիրառելի և նպատակահարմար չէ, ճիշտ չի կարող համարվել, որովհետև վերը նշված բոլոր անդամները կարող են դրվել նաև այլ հոլովներով, օրինակ՝ գործիականով: Ուրեմն գործիականի համար էլ կունենանք նույն սահմանումը: Քանի որ այս մոտեցումը՝ շարահյուսական կիրառությունից դեպի ձևաբանական ձևավորումը գնալը, սխալ է, ուրեմն մնում է ընդունել հակառակը: Այսինքն՝ ունենք որոշակի թվով ձևեր՝ իրենց ձևաբանական իմաստներով, որոնք բառական կոնկրետ դրսևորումներով նախադասության (բառակապակցության) մեջ շարահյուսական տարբեր իմաստներ են արտահայտում և ձևավորում են շարահյուսական տարբեր պաշտոններ:

Հետևաբար, եթե շարահյուսական տարբեր պաշտոնները միավորվում են արտահայտության որոշակի ձևային միջոցով, այսինքն ձևաբանորեն նրանց մեջ ընդհանուրը միայն ձևն է, ուրեմն հոլովված բառը բառաձև է՝ որոշակի ձևաբանական իմաստով, որով արտահայտվում է շարահյուսական տվյալ հարաբերությունը: Քանի որ ժամանակակից հայերենի գոյականական համակարգում ձևաբանական իմաստ արտահայտող առավելագույնը հինգ ձև կա (մի շարք բառեր չունեն ներգոյական հոլով), հետևաբար ժամանակակից հայերենում էլ գոյականն առավելագույնը ունի հինգ հոլով:

А. Л. САРКИСЯН - Теорема падежей. - В статье заново рассматривается вопрос о количестве падежей в современном армянском языке. После разъяснения целого ряда обоснований приводится некое положение, которое выстраивается и доказывается по принципу геометрической теоремы и покозывает, что в армянском существует пять падежей.